# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մրգաստան 3/15, Հեռ. 0231-6-38-10, 094 80 53 63, mrgastan.armavir@mta.gov.am

N 17-21
*01 փետրվար 2021թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում `Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 29-ի թիվ 2 նիստի որոշումները

Առդիր 62թերթ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարիբյան*
*023163810*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի, ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

8-Ն.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի 2021թվական թիվ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 29-ի, թիվ 2 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 3 կողմ | Օդեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Եղիգարյան | | | |
| Թ. Զանգիրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թվական հունվարի 29
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/27.2/1024-21
«21» 01 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հակոբյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի հունվարի 12-ի թիվ 01-21 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, տարեսկզբի ազատ մնացորդը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

1/21/2021

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Մարտիրոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-124

Արդարադատության
Նախարարություն

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, տարեսկզբի ազատ մնացորդը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, տարեսկզբի ազատ մնացորդը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:

2. Նախագծի նախաբանում «Բյուջետային համակարգի մասին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» բառերով:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավակարգավորման համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այս առումով հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյա նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյա

փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող Նախագծի հավելվածների տեսքով: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է վերանայել Նախագծով ամրագրված կարգավորումները՝ դրանք համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

1/20/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի 2021թվական թիվ 8-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

2.Եկամուտների մասով.
2.1 Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար, հատկացվել է՝ 12654.5 հազար դրամ:
2.2 Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, ֆոնդային բյուջե հատկացվել է՝ 270.0 հազար դրամ:

3.Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 8368173 դրամ 60 լումա, որից
Վարչական բյուջե՝ 8151881 դրամ 80 լումա
Ֆոնդային բյուջե՝ 216291 դրամ 80 լումա

4.Վարչական բյուջեի՝ 5400.0 հազար դրամը, ուղղել նախկին տարիների պարտքի մարմանը:

5.Վարչական բյուջեի 2751.9 հազար դրամը, ուղղել՝ ֆոնդային բյուջե:

Ընդամենը ֆոնդային բյուջե՝ 2968.2 հազար դրամ:

6.Վարչական մաս.

09 բաժին 02 խումբ 02 դաս 4639 հոդվածին ավելացնել 5400.0 հազար դրամ:

7. Ֆոնդային մաս.

04 բաժին 05 խումբ 01 դաս 5113 հոդվածին ավելացնել 15892.7 հազար դրամ:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | | |
|---|---|---|---|
| Ավագանու անդամներ | 3 կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |

Հ. Եդիգարյան __________  
Թ. Զանգիրյան __________  
Ա. Հովակիմյան __________

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մրգաստան համայնք
2021թվական հունվարի 29

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 3-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 11-ի թիվ 3-Ն որոշման մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները:

Մրգաստան համայնքի Էջմիածին-Աշտարակ մայրուղուց դեպի Մրգաստան տանող ճանապարհի բարեկարգման և ասֆալտապատման համար, համաձայն՝ կառավարության 2020թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 2183-Ն որոշման, Մրգաստան համայնքին կառավարության կողմից հատկացվել է՝ 12654.5 հազար դրամ /սուբվենցիա/:
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, ֆոնդային բյուջե կատարված հատկացումը՝ 270.0 հազար դրամ, նախատեսված է ասֆալտապատման աշխատանքների ֆինանսավորման համար:
Վարչական բյուջեից՝ 5400.0 հազար դրամը, ուղղվել է նախկին տարիների պարտքի մարմանը:
09 բաժին 02 խումբ 02 դաս 4639 հոդվածին՝ դպրոցի ֆիզկուլտ դահլիճի վերակառուցման համար ստացված է դրամաշնորհ:
04 բաժին 05 խումբ 01 դաս 5113 հոդվածին ավելացված 15892.7 հազար դրամը, նախատեսվել է ասֆալտապատման աշխատանքների ֆինանսավորման համար:

2021թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հ. Հ. օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, քանի որ համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմնի՝ սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար, անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիրն է, այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն:Միաժամանակ կնպաստի բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքներին, բյուջետային դասակարգմանը, հաշվառմանը և հաշվետվության միասնական մեթոդաբանությանը, ինչպես նաև համայնքապետարանի բնականոն աշխատանքների կազմակերպմանը:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

| Առաջարկության հեղինակը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|
| 2 | 3 | 4 | 5 |
| ...դարադատության ...ախարարություն ...ավական ակտերի ...իորձաքննության ...ձակալության պետ՝ Է. Մարգարյան | Նախագծի նախաբանում <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>> բառերից հետո նշված Հայաստանի Հանրապետություն բառերը անհրաժեշտ է հանել | առաջարկությունն ընդունված է ի գիտություն | <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, տարեսկզբի ազատ մնացորդը հաստատելու մասին>> նախագծի նախաբանում կատարվել է փոփոխություն՝ հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները |
| ...դարադատության ...ախարարություն ...ավական ակտերի ...իորձաքննության ...ձակալության պետ՝ Է. Մարգարյան | Նախագծի նախաբանում <<Բյուջետային համակարգի մասին>> անհրաժեշտ է փոխարինել՝ Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> բառերով | առաջարկությունն ընդունված է ի գիտություն | Համաձայն՝ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 34-րդ հոդվածի պահանջների վերանայվել է և կատարվել է անհրաժեշտ ուղղումներ, որոշման նախաբանում |